ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշտիի 1

№ 835-Ա « 10 » մարտի 2025 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ, ԸՆԹԱՑՔԱՎՈՐՄԱՆ, ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 15-Ի ԹԻՎ 2236-Լ ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազդարարման համակարգի մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի մարտի 15-ի N 272-Ն որոշումը.

1.Երևանի քաղաքապետարանում (բացառությամբ վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի) և Երևանի ենթակայության կազմակերպություններում ներքին և արտաքին ազդարարման հիմնական պատասխանատու անձ նշանակել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի վերահսկողության վարչության պետին:

2.Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերում ներքին և արտաքին ազդարարման հաղորդումների պատասխանատու անձ նշանակել աշխատակազմերի քարտուղարներին:

3.Սույն որոշման 1-ին և 2-րդ կետում նշված պատասխանատու անձանց՝ վարել ազդարարման հաղորդումների հաշվառման, ձևակերպման, ազդարարին տրվող պաշտպանության միջոցների իրականացման ընթացակարգերի էլեկտրոնային գրանցամատյաններ և ազդարարման հաղորդումների վերաբերյալ վիճակագրություն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի մարտի 15-ի N 272-Ն որոշման պահանջներին համապատասխան:

4.Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերում ներքին և արտաքին ազդարարման հաղորդումների պատասխանատուներին՝ եռամսյակային կտրվածքով՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսի 10-ը, ներկայացնել հաշվետվություն ազդարարման հիմնական պատասխանատուին:

5.Ներքին և արտաքին ազդարարման հիմնական պատասխանատուին՝ Երևանի քաղաքապետին ներկայացնել ամփոփ եռամսյակային հաշվետվություններ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 30-ը:

6.Ուժը կորցած ճանաչել Երևանի քաղաքապետի 2018 թվականի հունիսի 15-ի «Ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և հաղորդումներին ընթացք տալու համար պատասխանատու անձեր նշանակելու մասին» N 2236-Լ որոշումը:

7.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի, Երևանի վարչական շրջանների ղեկավարների վրա:

8.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ